ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

» 07 « 10 2010թ.
N: 03/4082-10

ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16
հեռ. (0312) 5-33-66, ֆաքս (0312) 3-50-77

Գյումրի քաղաքի <<Շիրակշին>> 3-րդ բանավանի
թիվ 7 և թիվ 8 մոդուլների բնակիչներ
Յաշա Մանուկյանին և մյուսներին

Ի պատասխան ՀՀ Շիրակի մարզպետին ուղղված Ձեր 2010 սեպտեմբերի 17-ի թիվ 8E8F-3E03-970B դիմումի հայտնում ենք հետևյալը.

ՀՀ տնտեսական դատարանի 2005 թվականի նոյեմբերի 18-ի վճռով <<Շիրակշին>> ՓԲԸ-ն ճանաչվել է անվճարունակ: Լուծարային գործընթացի ընթացքում <<Շիրակշին>> 3-րդ բանավան հասցեում գտնվող ՓԲԸ-ի սեփականությունը հանդիսացող թիվ 7 և թիվ 8 մոդուլները սեփականության իրավունքով օտարվել են 2009 թվականի հոկտեմբերի 10-ին կայացած հրապարակային աճուրդում հաղթող ճանաչված ՀՀ Շիրակի մարզի Զորակապ գյուղի բնակիչ Վահրամ Իգիթյանին, 2009 թվականի հոկտեմբերի 12-ին նրա հետ կնքվել է առուվաճառքի պայմանագիր:

Ձեր դիմումում առաջ քաշված խնդրո առարկա հարցը քննարկվել է մարզպետարանում՝ Վահրամ Իգիթյանի մասնակցությամբ: Վերջինս պատրաստակամություն է հայտնել մոդուլները վաճառելու համար բանակցել բնակիչների հետ:

Միաժամանակ հարկ ենք համարում տեղեկացնել, որ համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 8-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը, իսկ համաձայն 31-րդ հոդվածի՝ ոչ ոքի չի կարելի զրկել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերի:

Խ.ՊՈՂՈՍՅԱՆ

Կատարող՝ Տ.Ղարիբյան
հեռ՝ (0312) 2-27-20

ՀՀ Ազգային Ժողովի նախագահ՝
պարոն Հ. Աբրահամյանին
Գյումրու Շիրակշին 3-րդ բանավանի
բնակիչների կողմից

ԴԻՄՈՒՄ

Մեծարգո նախագահ՝ Շիրակշին 3բանավանի բնակիչները Ձեզ դիմումով խնդրել էին կայացած աճուրդ-վաճառքի կապակցությամբ: Մարզպետարանը մեզ պատասխանել է, որ սնանկության գծով կառավարիչ Խ. Պապոյանը պատրաստակամ է մոդուլները վաճառել 140-150 հազար հհ դրամով մեզ՝ բնակիչներիս: Սակայն դա այդպես չէ: Նա մեզ ուղարկում է բանակցել սեփականատեր Վահրամ Իգիթյանի հետ: Վերջինս մեզանից պահանջում է կրկնակի գումար:Ուզում եմ նաև հայտնել Ձեզ, որ Խ. Պապոյանը առանց մեզ տեղեկացնելու կայացնում է աճուրդ-վաճառքը և գաղտնի պահում մեկ տարի: Մեզ շատ է զարմացնում նաև այն հանգամանքը, որ գնողը մեկ անգամ չի բարեհաճել ուսումնասիրել գնված գույքը:,Բանից պարզվում է, որ նա գնել է ոչ միայն գույքը, այլև մեզ՝ բնակիչներիս:, Մարզպետարանի պատասխանը բնակիչներիս չի բավարարել: Ես գտնում եմ, որ խախտվել են մեր իրավունքները, ցուցաբերվել են անտարբեր մոտեցումներ:

Ասեմ Ձեզ, որ 30 տարի կրթել և դաստիարակել եմ մի ամբողջ սերունդ, աշխատել եմ թիվ 22 դպրոցում որպես ռուսաց լեզվի և գրականության ուսուցիչ, հիմա շպրտվում եմ փողոց, որը հարիր չէ հայ մանկավարժին: Նշված գումարի չափից ավելին վճարել ոչ մեկը չի կարող: Մեր խնդրանքն է անձամբ զբաղվել այս հարցով և տալ դրական ընթացք ի օգուտ մեզ բնակիչներիս:

Դիմումիս հետ կծում եմ Մարզպետարանի պատասխանը:

«ՇԻՐԱԿՇԻՆ» ՓԲԸ
ՄՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՎ ԿԱՌԱՎԱՐԻՉ

22 Սեպտեմբերի 2010թ.

ք. Գյումրի Շիրակշին 3-րդ բանավանի բնակիչ
Ա. Գրիգորյանին

Ի պատասխան Ձեր դիմումի հայտնում եմ, որ 10.10.2009թ կայացած հրապարակային սակարկություններով «Շիրակշին» ՓԲԸ - ին սեփականության իրավունքով պատկանող Շիրակշին 3-րդ բանավանում գտնվող թիվ 7; 8; 9; մողուները օտարվել են:

ՄՆԱՆԿՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾՈՎ ԿԱՌԱՎԱՐԻՉ Խ. Պապոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

«11» 11 2010թ.

N: 03/4542-10

ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16

հեռ. (0312) 5-33-66, ֆաքս (0312) 3-50-77

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ <<ՇԻՐԱԿՇԻՆ>>
3-ՐԴ ԲԱՆԱՎԱՆԻ ԲՆԱԿԻՉՆԵՐ
ՅԱՇԱ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ԵՎ ՄՅՈՒՍՆԵՐԻՆ

ՀՀ ազգային ժողովի նախագահին ուղղված և ՀՀ ազգային ժողովի աշխատակազմի քաղաքացիների ընդունելության և նամակների բաժնի վարիչի կողմից 29.10.2010թ թիվ ՁՁ-1027 գրությամբ ՀՀ Շիրակի մարզպետարան վերահասցեագրված Ձեր դիմումի վերաբերյալ հայտնում ենք.

ՀՀ տնտեսական դատարանի 2005 թվականի նոյեմբերի 18-ի վճռով <<Շիրակշին>> ՓԲԸ ճանաչվել է անվճարունակ: Լուծարային գործընթացի ընթացքում <<Շիրակշին>> 3-րդ բանավանում գտնվող <<Շիրակշին>> ՓԲԸ-ի սեփականություն հանդիսացող թվով 18 մոդուլներից (մեկ մոդուլը բաղկացած է չորս բնակարանից) սեփականության իավունքով օտարվել են թիվ 1, 7, 8, 9 մոդուլներն ամբողջությամբ, իսկ թիվ 4 և 12 մոդուլները մասնակիորեն, ընդ որում հրապարակային աճուրդում թիվ 7, 8, 9 մոդուլները սեփականության իրավունքով օտարվել են այլ իրավաբանական անձանց, իսկ մյուսները գնել են նույն բնակարաններում բնակվող բնակիչները (թիվ 1-ը ամբողջությամբ, թիվ 12-ի երկու բնակարանը և թիվ 4-ի մեկ բնակարանը):

Ձեր դիմումում առաջ քաշված հարցը ՀՀ Շիրակի մարզպետարանում քննարկվել է ընկերության սնանկության գծով կառավարիչ Խ.Պապոյանի մասնակցությամբ: Վերջինիս հայտարարության համաձայն՝ Ձեզ առաջարկվել է ուղղակի վաճառքի միջոցով գնել Ձեր կողմից զբաղեցրած բնակելի տարածքները (յուրաքանչյուրը 117,0 քառ.մ մակերեսով) 140,0-150,0 հազ. դրամ արժեքով: Նա պատրաստակամություն է հայտնել մոդուլները Ձեզ վաճառելու հարցով մեկ անգամ ևս բանակցել Ձեզ հետ: Պարզաբանվել է նաև, որ գրեթե նույն արժեքով բնակելի տարածքները պատրաստեն Ձեզ վաճառել նաև թիվ 7, 8, 9 մոդուլների սեփականատերերը: Հետևաբար Դուք կարող եք սեփականության իրավունքով ձեռք բերել Ձեր կողմից զբաղեցրած բնակելի տարածքները:

Միևնույն ժամանակ տեղեկացնում ենք, որ համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 8-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը, իսկ համաձայն 31-րդ հոդվածի ոչ ոքի չի կարելի զրկել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերի:

Խ.ՊՈՂՈՍՅԱՆ

Կատարող՝ Ա.Մարգարյան
Տ.Հարությունյան
Հեռ. /0312/ 3-55-39

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

0078, ք. Երևան, Հալաբյան փող., 41ա

N 3637-10

«15» «10» 2010 թ.

Քաղ.Յ. Մանուկյանին և մյուսներին

/Գյումրի, Շիրակշին 3-րդ բանական,մող 7/1/

ՀՀ նախագահի վերահսկողական ծառայությունից 2010թ. հոկտեմբերի 12-ի հ.20-8326 գրությամբ ստացված Ձեր՝ ամուրդ-վաճառքի մասին Ձեզ տեղյակ չպահելու վերաբերյալ դիմումն ուսումնասիրվել է ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի վերահսկողության վարչությունում:

Այդ կապակցությամբ տեղեկացնում եմ, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 13-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված գործերի ենթակայությանը համապատասխան, իրականացնում է դատարանը:

Հետևաբար՝ եթե գտնում եք, որ խախտվել են Ձեր իրավունքներն ու օրինական շահերը, ապա դրանց վերականգնման պահանջով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով կարող եք դիմել դատարան:

Աշխատակազմի վերահսկողության

վարչության պետի ժ/պ Լ.Սիմոնյան

կատ. Է. Տարախչյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ

010

0002 Երևան, Պուշկինի փող. 56ա, հեռ. 537651

№ 5163-10

22.10.2010թ.

բաղ. Յաշա Մանուկյանին
ՀՀ, Շիրակի մարզ, բաղաք Գյումրի, Շիրակշին, 3-րդ բանավան, մոդուլ 7, բն. 1

Հարգելի պարոն Մանուկյան

Ուղարկվում է Ձեր բողոքը քննարկման ընդունելու մասին որոշման մեկ օրինակը: Քննարկման վերջնական արդյունքների մասին Դուք տեղյակ կպահվեք: Խնդրում եմ որոշման մասին տեղեկացնել նաև դիմումը ստորագրած մյուս անձանց:

Առդիր՝ որոշումը մեկ թերթից:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Գ. Մարության

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ

ԳՈՐԾ ԹԻՎ Մ 1169-10

ՈՐՈՇՈՒՄ
Բողոքը քննարկման ընդունելու մասին

22.10.2010թ. ք. Երևան

ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Շիրակշին բանավանի բնակիչ Յաշա Մանուկյանը / ՀՀ, Շիրակի մարզ, քաղաք Գյումրի, Շիրակաշին, 3-րդ բանավան, մոդուլ7, բն. 1 / եվ դիմումը ստորագրած մի խումբ անձինք ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմումով հայտնել են, որ իրենք ապրում են հիշատակված մոդուլներում արդեն շուրջ բսան տարի է: Այդ ժամանակահատվածում աշխատել են և ապրել ռուս շինարարների հետ: «Լենինգրադստրոյ» կազմակերպությունն իրենց է նվիրել այդ տնակները, սակայն 2009 թվականին նրանք պարզել են, որ առանց իրենց գիտության այդ տարածքները աճուրդով վաճառվել են այլ անձի:

Խնդրել են Պաշտպանին աջակցել իրենց խախտված իրավունքների վերականգնմանը:

Նկատի ունենալով, որ դիմումը համապատասխանում է Մարդու իրավունքների պաշտպանի մասին ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի պահանջներին, ղեկավարվելով նույն օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով

ՈՐՈՇԵՑԻ

1.Քաղաքացի Յաշա Մանուկյանի և դիմումը ստորագրած անձանց բողոքն ընդունել քննարկման:

2.Բողոքում նշված փաստերի ուսումնասիրումը հանձնարարել մասնագետ Գ. Մարուքյանին:

3. Որոշման մեկ օրինակն ուղարկել դիմումատուին:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ